ՊԱՇՏՈՆ	Կորպորատիվ հաճախորդների աջակցման խմբի համակարգող
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	13/10/2023թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածուի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իր ենթակայության ներքո գտնվող թիմի աշխատանքների ռազմավարության, դրան առնչվող ընթացակարգերի և կանոնակարգերի մշակմանը մասնակցություն, վերջիններիս կատարմանը ապահովում,
- Վերահսկել խմբի աշխատանքի որակը և ապահովել ամենօրյա գործառույթների իրականացումը,
- Ապահովել Կորպորատիվ հաճախորդների կողմից իրականացվող գործարքների վերլուծության համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման, փոխանցման և հաստատող ստորաբաժանումների հետ համաձայնեցման պրոցեսը,
- Ապահովել Կորպորատիվ հաճախորդների կողմից իրականացվող ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Բանկային գործարքների, գործարար հարաբերությունների վերաբերյալ վերլուծությունների և միջազգային փոխանցումների համակարգերի միջոցով կատարվող գործարքների վերաբերյալ մոնիտորինգի իրականացման պրոցեսները,
- Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների, այդ թվում ֆինանսական մոնիտորինգի և/կամ այլ ստորաբաժանումների հետ աշխատանքների կոորդինացում, նշված ստորաբաժանումների կողմից ստացված կորպորատիվ հաճախորդների գործարքների վերաբերյալ հարցումների մշակման գործընթացի արդյունավետ կազմակերպում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 4 տարվա աշխատանքային փորձ բանկային համակարգում
- Բանկերի գործունեության, Բանկային օրենսդրության և ՓԼ/ԱՖ ոլորտը կարգավորող իրավական ակտերի իմացություն
- Բանկայինպրոդուկտների իմացություն,
- Հայերենի՝ գերազանց, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն

- Համակարգչային գիտելիքներ՝ MS Office -ի լավ իմացություն, LSoft -ի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Վերլուծելու հմտություններ
- Հաղորդակցման հմտություններ
- Ուշադրություն մանրուքների նկատմամբ, միաժամանակ մի քանի առաջադրանքներ կատարելու հմտություն
- Խնդիրների արագ ու արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորար Բանկ՝ ` հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: